

ԱՐՁԱՆՈՒՄ - 320-2-



ՆՈՐԱՅԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ


◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳՍԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼՏՈՐԷՆ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 7

15 ՄԱՐՏ 1920

ԳԻՆ 100 ՓՐ.



Հայ հայրենասիրութեան եւ գրագիտութեան

ռահվիրաներէն

ՀԱՅՐ ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ԹԻԻ 10

. . 0 . .
 . . 0 . .
 . . 0 . .
 . . 0 . .
 . . 0 . .
 . . 0 . .

1. Հայաստանի սիրտէն բղխող
 գետ մը :
2. Այս առաջինին մէջ թափող
 հայկական դետակ մը :
3. Սեւ Ծովի մօտ լեռ մը :
4. Հայաստանի գեղեցիկ լիճերէն
 մէկը , մէջը համանուն կղզեա-
 կով մը :
5. Հանրածանօթ գերման գրա-
 գէտ մը :
6. Վանայ Ծովի կղզիներէն մէկը :

Զրօներուն գիրերով վերէն
 վար կարդալ ձեռ մէկ սիրելի բա-
 րեկամին անունը :

ՅԵՆԻԿ Ա. ՏԷՐ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ
 Բանկալիքի

ԹԻԻ 11

Եմ եռավանկ մէկ ածական,
 Մէջըս բան մը չկայ սակայն .
 Երկու կողմէն նայանքման
 Կը կարդացուիմ , այս ալ պայման :
 Կարծեմ այսչափ խօռքեր են բաւ .
 Պզտիկ ջանքով մը զիս հարկաւ
 Պիտի գտնես , սիրո՛ւն տըղաս ,
 Շն ածօթով պէտք չէ՝ մընաս :

ԳՐԻԶ-ՔՆԱՐ

ԹԻԻ 12

Հինգ երկավանկ բառ գտիր :
 Ամենքն ալ անխտիր ,
 Կարդալով երկու կողմէն ,
 Պիտի գտնես թէ նոյն են :
 Ըսածներս լա՛ւ լօիր ,
 Վերջը կ'մնաս մտացիր .
 Շարէ զանոնք տակ տակի ,
 Մըտածելով ուղղակի :

Յետոյ կարդա վերէն վար ,
 Ծայրի գիրերն բառերուն ,
 Որ կողմէն կ'ուզես կարդա ,
 Նոյնն է շարքը տառերուն :

Գիտե՛մ որ լաւ խորհելով
 Կը յաջողիս անսլաւառ ,
 Կը յաղթէ շատ վտանգներ ,
 Աշխատութիւնն անաչառ :

Բայց չմոռնամ ձեզ ըսել ,
 Զգոյշ կենալ պատիժէն . . .
 Բանզի երկու ապտակներ ,
 Պատրաստ են աջէն ձախէն . . .

ՇԱՀՆԱԶԱՐ ՔԷՕԹԱՀԵԱՆ

ԹԻԻ 13

Անուն մըն եմ ես աղջկայ ,
 Անուանս մէջ գաղտնիք կայ ,
 Գաղտնիքն ահա ձեզ կ'ըսեմ
 Զորս գրրէ բաղկացած եմ
 Երկու ձայնաւորներով
 Եւ երկու բաղաձայնով :
 Մեր օրիորդ ձայնաւորներ
 Են իմ աջ ու ձախ կողմեր ,
 Իսկ պարոն բաղաձայններ
 Կեցած են ճիշդ մէջտեղներ :
 Գիտցէ՛ք տղաք անունս իմ ,
 Ես ձեզ կուտամ նըւէրս իմ :

ԱՆԺԻԼ ԶՍԲԻՖԵԱՆ


Բանկալիքի



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿ. ՀԱՆԴԵՍ

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Խմբագիր
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ




Տէր ԷԼ ՏՆՈՐԷՆ
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ — ԹԻԻ 7

15 ՄԱՐՏ. 1920

ՃԵՄԱՐԻՏ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ



Փոքրիկ բարեկամներս,

Անցեալ անգամ փորձեցի համառօտ կերպով ձեզ բացատրել թէ ի՞նչ է հայրենիքը և թէ ինչո՞ւ կը սիրենք զայն: Այսօր պիտի ջանամ խօսիլ ձեզ հայրենասիրական զգացումին, անոր մշակումին ու անկէ յառաջ գալիք բարիքներուն և օգուտներուն մասին:

Հայրենասիրութիւնը մէկուն իր հայրենիքին հանդէպ ունեցած սէրն է, ինչպէս ըսինք: Այդ՝ անհատին համար ծննդավայրի ու բնակավայրի սէրն է, իսկ ցեղին համար՝ հասարակաց հայրենիքի սէրը: Այս զգացումը խորապէս արմատացած է իւրաքանչիւր նշմարիտ հայրենասերին հոգիին խորքերուն մէջ: Ամէն մարդ էակ ունի այս սէրը՝ իր քաղաքակրթութեան ու զարգացումին ստորիճանին հետ համեմատական չափով մը, ինչ որ իրողութիւն է մեր շատ մը սէրերուն համար: Բնականաբար զարգացեալ մտաւորականի մը ու պարզուկ գեղջուկի մը հայրենասիրութեան մէջ տարբերութիւններ կան, թէ գիտակցութեամբ, թէ քմբռնումի տեսակէտով: Բայց այս տարբերութիւնը պատճառ մը չէ անոր գոյութիւնը կամ կարեւորութիւնը անտեսելու: Ան կայ ու կը մնայ, նման մեր շատ մը ազնիւ սէրերուն, որոնք մշակումի, զարգացումի պէտք ունին: Որովհետեւ այս զգացումն ալ, ուրիշ շատ մը ազնիւ զգացումներու նման, մեր հոգիները կը պճնէ վեհ ու վսեմ յատկութիւններով ու բարձրօրէն խանդավառող ներշնչումներով:

Ուրեմն, դեռատի բարեկամներս, քանի որ ունինք այս զգացումը, քանի որ այս վսեմ նպատակի մը համար տրուած է մեզ, քանի որ ընդունակ է ան ա՛լ աւելի ազնուանալու, հետեւաբար մշակել կը պարտինք զայն: Որովհետեւ չմոռնանք որ այն ամէն սէրերն ու զգացումները զորս չենք մշակել ու ազնուացներ, ենթակայ են բթանալու, տկարանալու ու իրենց նպատակէն վրիպելու: Ահա այս պատճառաւ հայրենասիրական գրականութեամբ, քաջութեան և հերոսութեան օրինակներով պէտք է մշակենք այս զգացումը, զօրացնենք զայն, այնպէս որ՝ ան ըլլայ մեր հոգիներուն զօրաւոր զգացումներէն մէկը: Մեր հայրենիքին գեղեցկութեան, տեսարաններուն, անցեալին անուշ յիշատակներուն, պատմական խանդավառող դրուագներուն մասին խօսիլ, կարգալ, սորլիլ մեծապէս կը սատարէ այս զգացումին մշակման: Անոր համար եղած են, հայրենագիտութեան, Ազգային պատմութեան, հայրենասիրական գրականութեան դասերը:

Ու հիմա կրնաք հարցնել թէ հայրենասիրութեան այս զգացումը մշակելով ի՞նչ բարիքներ կրնան յառաջ գալ: Շատ բարի. հիմա ըսեմ ձեզ մէկ քանին անոնցմէ ու կարծեմ դուք ալ ինծի հետ պիտի հաստատէք անոնց կարեւորութիւնն ու օգտակարութիւնը:

Նախ այս զգացումը կը կապէ մեզ մեր հայրենիքին ու անոր մէջ բնակող մեր համացեղ եղբայրներուն: Ի՞նչ պիտի խորհէիք այն տղուն կամ աղջկան մասին որ իր տունը և ընտանիքին անդամները չի սիրեր: Այնպէս են նաեւ հայրենասէր չեղող անհատներ ու ազգեր: Իբրեւ ազգասպրեւու համար անհրաժեշտ է ունենալ հայրենիք, որ միակ կալուածը պէտք է ըլլայ անոր վրայ ասպրող սերունդներուն: Հայրենասիրութեան զգացումով կ'ապահովենք մեր հայրենիքին ազատութիւնն ու բարգաւաճումը, որ է ազգին ազատութիւնն ու բարգաւաճումը: Այս կերպով ճշմարիտ հայրենասէրը կ'ըլլայ նաեւ եղբայրասէր մը, ազգասէր մը ու վերջապէս այլասէր մը:

Նաեւ այս զգացումը մշակելով է որ մենք կ'ըլլանք անձնուէր, ու ազնիւ զգացումներու ընդունակ: Ու չի մոռնանք որ այսօրինակ մարդիկ են որ մեծ ծառայութիւններ մատուցած են աշխարհիս, թէ իրենց զործերով, թէ իրենց անձին օրինակներով:

Հարկաւ սխալ է խորհիլ թէ հայրենասէր մարդիկ նեղմիտ կ'ըլլան ու մոլեռանդ. ո՛չ. ճշմարիտ հայրենասէրը կ'ընդունի որ աշխարհի վրայ ամէն քաղաքացի իրաւունք ունի իրեն նման ունենալու հայրենիք մը, «տեղ մը արեւին տակ» ու կը յարգէ ուրիշներու ազատութիւնն ու հայրենասիրական զգացումը:

Օ՛ն ուրեմն, սիրելի փոքրիկներ, սորվեցէք հայրենիքի ու հայրենասիրութեան մասին, եղէք նճմարիս հայրենասէրներ, մշակեցէք այս ազնիւ զգացումը, սիրեցէք ձեր հայրենակիցներն ու բոլոր արժանի մարդ-եղբայրները, ըլլալով միշտ վեհանձն, միշտ անձնուէր, միշտ բարի:



ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ

Հ Ա Յ Տ ՈՒ Ն Ը

Կարգուկանոնն է միակ
Գեղն ու հրմայք Հայ տունին,
Տուներ, որ չեն բարեկարգ,
Բնաւ հրապոյր մը չունին:

Գոհունակ սիրն, իրա՛ւ որ,
Օրհնութիւնն է Հայ տունին,
Դժգոհ սիրտն ո՛չ մէկ օր
Շէն, երջանիկ չեն ինքնին:

Ասպրնջական ոգին է
Հինաւուրց, փառքն Հայ տունին,
Որ շատ ցաւեր կ'ամոքե
Բախտանովն երկնային:

Աստուածավախ սերունդներ
— Միակ պրսակ Հայ տունին —
Անաճ շնորհով, օրհնաբեր՝
Հայ տունին թո՛ղ տէր կանգնին:

Կարգապահ ու գոհունակ,
Ասպրնջական, բարեպաշտ
Ըլլան, Հա՛յ տուն, բու համակ
Սերունդներդ սիրով հաշտ:

Օրհնութիւն բիւր բարիքով,
Պապենական ո՛վ Հայ տուն,
Ազգեր փառքիդ ջաշագով,
Երանական ո՛վ Հայ տուն:

22 Փետր. 910

ԿԻԼԻԿԵՑԻ

ԱՌԱԿԱՆԻ

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ



Աներեսը բարկենդանի
Կ'երթայ բարեւ տունդին,
Աներեսին թքնես երես՝
Փառք այ անձրեւ տունդին:

Ամեն փայլուն
Բան ոսկի չէ,

Մմէն մարդուն

Սեր մեջ է:

Անկէ հաւկիթ առնողը
Մեջը դեղնուց չի գտնէր.
Խաբեբային ներքողը
Կ'ընեն իրեն նրմաններ:

Անպրտուղ ծառին
Քար նետող չըլլար,
Մարդիկ կ'աշխատին
Շահու մը համար:

Անխելիքն համար
Դրամն՝ անօգուտ.
Խելք գործածէ յար
Կը յաջողիս շատ:

Բաղը ջուր կը պոռայ,
Հաւը՝ չոր.
Խորհիլ միշտ իր վրայ՝
Բան չէ նոր:

Բանուկ համբան փռի.
Անկոխ համբան՝ փռւ.
Գործէ՛, կեանքդ մաշի՝
Քան նրսիս ապուռ:

Բարձր լեռան բուքն ու փամին
Շատ կ'ըլլայ.
Հարուստն հոգիւր ունի նոր, հին,
Է՛հ, ի՞նչ կայ:

Բարի օրը բարի լուսուն
Յայտնի է.
Բարի զաւկին այ մանկութիւն
Բարի է:

Իրաւ կ'ըսեն. բերնէ բերան
Ասեղն անգամ կ'ըլլայ գերան.
Սուսըդ յանախ ուրիշներ քեզ
Կը կլկեցնեն կարագի պէս:

ԱՌԱԿԱՆՈՍ

ԳԻՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՕՐՕՐՈՑԸ ԿԱՄ ՁՈՒՆ

է.

Խորշին արտաքին ու ներքին գործու-
նէութիւնները.— Ձուկի հաւկիթը.— Թըռ-
չունի հաւկիթին մէջ ձկնային հանգա-
մանքներ.— Թռչունին նախահայրը.—
Դէպի բարձրագոյն աստիճաններ.—
Ատնաւորի ծուն.— Խորշերը միշտ հա-
ւատարիմ իրենց գործին.

Գորտի մը ձուկին սէջ խորշե-
րու խաւին այս գաղտնիքը հաս-
կնալը՝ կը նմանի արուեստագէ-
տին միտքի յղացումը նկարելու
գաղտնիքը հասկնալու։ Մենք այս
կերպով խորշերու արտադրած
գործը և գործունէութիւնը տե-
սած կ'ըլլանք, բայց թէ ինչո՞ւ
ոմանք ոսկոր, ոմանք մկան, ու-
րիշ մը ուղեղ կը շինեն, այդ
չենք հասկնար։ Խորշին արտաքին
կեանքը կրնանք հետազօտել, բայց
ներքինը՝ ոչ։ Այդ գաղտնիք մըն է։

Այսպէս ձեւափոխուող և ա-
ճող ամէն հաւկիթի մէջ շերտփի-
կին անցած հանգրուանները կը
տեսնենք։ Ձուկի մը ձուն ալ այս-
պէս է։ Ոմանց մէջ խորշերու խա-
ւը թոյլ կերպով միացած է ձու-
կին և սնունդ-դեղնուցը մասամբ
ձուկին մարմնին մէջն է ու կը
սնուցանէ դայն, մինչեւ որ ան
կարենայ ինքզինքը հոգալ։ Այս
խորշերու խաւին դեղնուցի պար-
կի ձեւափոխութիւնը հաւկիթի
դարգացման բարձրագոյն ձեւե-
րուն յատուկ է։

Դանք բարձրագոյն կեանքերու
գաղտնիքին։ Գորտի և ձուկի
հաւկիթներուն սկզբնական այս

ձեւափոխութիւնները թռչունի
հաւկիթին մէջն ալ տեղի կ'ունե-
նան։ Թռչունի հաւկիթին մէջն
եւս խոլիկներ ձեւացնելու երե-
ւոյթ մը կը տեսնենք և կը կար-
ծենք թէ վրիպում մըն է այս.
բայց ո՛չ, թռչունը իր նախահայ-
րերուն կեանքի պայմաններուն
յարգանք մը ըրած կ'ըլլայ այս
կերպով. որովհետեւ հին դարե-
րուն երբ թռչուն չկար և կէս-
ձուկ կէս-թռչուն արարածներ
կային, անոնք մեր այժմու դե-
ղեցիկ թռչուններուն նախահայ-
րերն էին։ Մենք այժմու արագա-
թռիչ թռչունները տեսնելով ա-
նոնց խոնարհ նախահայրերը մոռ-
նալու չենք։

Ահա այս կերպով խորշերը
նախահայրական ձուկ ձեւը բար-
ձրագոյն թռչուն ձեւին կը փո-
խեն. խոլիկը կտուցի կը ձեւա-
փոխեն, արտաքին խորշերը ձուկի
հանգրուանէն անցնելու և ներ-
քիններն ալ՝ ներքին գործարան-
ները կերպաւորելու կը ծառայեն,
օդի պարկէն՝ թոք յառաջացնե-
լով, սիրտը երկուքի տեղ չորս
խորշիկներու բաժնելով և թրու-
չունը ձուկէն տարորոշող շատ մը
մանրամասնութիւններ յառաջ
բերելով։ Այսպէս ձեւափոխութեան
աստիճաններուն վրայ ձուկի հան-
գրուաններէն անցնող ձուն ինչո՞ւ
չի կենար այդ աստիճանին վրայ
ու կը բարձրանայ թռչունի աս-
տիճաններուն։ Որովհետեւ ներ-
քին կենսունակութիւն մը նեղ կը
գտնէ ձկնային կեանքի պայման-
ները թռչունին համար ու կը մղէ
դայն մինչեւ իր ծնողքին աստի-
ճանը։ Թռչունի նախասաղմին

քարձրագոյն գործունէութեան իր-
քեւ կանխահոգութիւն անոր ձու-
նելի խնամքով արգասաւորուած
ու պահուած էր քան գորտին կամ
ձուկինը : Հիմա կը տեսնենք թէ
թռչունի հաւկիթին խորշերը ա-
ւելի գործ ունին թռչունը կա-
տարելագործելու համար :

Եթէ ձուն ստնաւորի մը ձուն
է, նախասաղմը մեր ցարդ նկա-
տածներէն աւելի փոփոխութիւն-
ներու պէտք է ենթարկուի : Ըստ-
նաւորը նախ իբր խոնարհ միաբջիջ
կը սկսի, բայց ներքին ուժը կը
մղէ զայն ըլլալու որդ մը, յա-
ջորդական փոփոխութեամբ մը
ձկնային նախասաղմի հանդա-
մանքները կը ցուցադրէ. բայց
ստնաւորի ձու էր, կատու, ձի
կամ շուն պիտի ըլլար. հետեւա-
բար խռիկները վերի և վարի
ծնօտի և ականջի կը փոխակեր-
պուին : Իւրաքանչիւր նախասաղմ
դէպի իր սահմանեալ աստիճանը
կը փութայ՝ մինչեւ ստանայ իր
տեսակին յատուկ գործարանները :

Թէեւ բոլոր ստնաւորները նոյն
ընդհանուր ծրագիրին վրայ շին-
ուած են, բայց խորշերը կարծես
գիտակ են պէսպիսութիւններուն :
Նապաստակի խորշեր երկար ե-
տեւի ստքեր և կրծող ակռաներ
շինելէ չեն վրիպիր : Շունի խոր-
շեր մսակերի սուր ակռաներ շի-
նելը չեն մոռնար : Ասկէ զատ
նապաստակին իւրաքանչիւր խոր-
շը՝ նապաստակի և շունինը՝ շու-
նի խորշեր են, իւրաքանչիւրը իր
պատկանած կենդանին կ'արտադ-
րէ, և ոչ ուրիշ կենդանի :

ՄԱՐԿՐԻԹ ՌԻՈՐՆԸՐ ՄՈՐԼԻ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ԶՈՅԳ ՄԸ ԿԱՏՈՒՆԵՐ

Վարդուհի՝ տան մէջ շատ
մը խաղալիկ բայց միայն երկու
խաղի ընկեր ունէր : Խաղալիկնե-
րէն մէկուն ինչ ըլլալը քիչ ետքը
կը տեսնենք, բայց հիմակուրէն
ըսենք թէ անոր ընկերներէն մէ-
կուն անունը Փիտիկ էր, իսկ միւ-
սին անունը Բամպակ էր :

Փիտիկ և Բամպակ կատուի
երկու սիրուն ձագեր էին, առա-
ջինը սեփ-սեւ էր, երկրորդը ձիւ-
նի պէս ճերմակ : Անոնք երբեք
իրարմէ չէին զատուեր և օր մը
օրանց անոնց կռուրտիլը մէկը
տեսած չէր, միայն թէ անոնք
երբեք առանձին մնացած չու-
նէին :

Արդ, օր մը այնպէս պատա-
հեցաւ որ, Վարդուհի դպրոց
գնաց և կատուներուն մայրն ալ
պարտէղ իջաւ օդ առնելու : Ու-
րեմն երկու փիտիկներ սենեակին
մէջ միմիկնակ մնացին, աղա-
քնելու, ինչ որ խելքերնուն փչէր :

Փիտիկ և Բամպակ սկսան նախ
սիրով իրարու հետ խաղալ, ինչ-
պէս կը վայլէ քրօջ և եղբօր.
ետքը սկսան ցատկել, ցատկը-
տել, իրարու վրայ տապալակիլ,
գիրար հալածել և վերջապէս, կը
ցաւիւմ հաստատելու, սկսան նաեւ
իրարու հետ կղուրտիլ :

Ինչո՞ւ արդեօք, անոնց կռի-
ւին պատճառը ի՞նչ էր : Մեր Փի-
տիկը յանկարծ կեցաւ, գլուխը
վեր վերցուց, ականջները տնկեց,
աչքերը խոշոր խոշոր բացաւ :

Հեռուն տեսածն ի՞նչ էր, մկնիկ մը չէ՞ր միթէ, այո՛, մկնիկ մը, ճիշդ օրերէ ի վեր իր երազած մկնիկը :

Հօ՛ւփ, ըրաւ, ցատկեց մկնիկին ետեւէն, յետոյ կծկտեցաւ, թաթիկները ծալլեց, պտտրապտ յարձակելով : Բամպակ իր եղբօրմէն վար մնալ չուզեց, պոչը տնկեց, նետուեցաւ առաջ ու անոր ճամբան կտրեց : «ՄԷ՛ր բարով, քիչ մը կամաց, որո՞ւնն է մուկը, ո՞վ առաջ տեսաւ :» «Շատ մի՛ աճապարեր, ո՞վ կեցուց որսը, ո՞վ առաջ հասաւ :»

«Ե՛ս, դո՛ւն», «ա՛ռ քեզի, քեզի ալ ա՛ռ», խրո ըրին, մըռըրին, թիզացան, Փիսիկ ակռաները ցուցուց, Բամպակ ճանկերը սրեց, զարկին, զարնուեցան, բուրդերնին օդին մէջ թռաւ, գզուեցաւ, քիթերնին ճանկըրտուեցաւ, արիւնեցաւ :

Եւ երբ աղէկ մը զիրար չարչրկեցին՝ իրենց ալ խելքը տեղ ըրաւ որ աւելի աղէկ կ'ըլլար, եթէ ծեծի սկսած չըլլային : Նոյն միջոցին Վարդուհի վրայ հասնելով՝ երկուքին ալ աղուոր ամոց մը տուաւ և Փիսիկը մէկ կողմ, իսկ Բամպակը միւս կողմ փախցուց և կռիւը դադրեցաւ :

Բայց ի՞նչ կը կարծէք, բոլոր այս աղմուկի միջոցին կռիւի տեղի տուող չարածձի մկնիկը միթէ փախաւ և իր ծա՞կը մտաւ : Ամենեւին, տեղէն անգամ չի չարժեցաւ, և ի՞նչպէս կ'ուզէք որ չարժէր, քանի որ Վարդուհիին խաղալիկն էր այն :

Այո՛, թուղթէ շինուած կեղծ մկնիկ մը, և քոյր ու եղբայր

չնչին բանի մը համար քիչ մնացեր էր որ զիրար սպաննէին : Շիտակը, որչա՞փ ալ կ'արժէր :

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԷՍ

ՈՂՋՈՅՆ ՀԱՅ ԲԱՆԱԿԻՆ

Բ. Հիսարի բարձունքէն կուգամ ձեզ ուղղել մանկական սիրտիս զգացումները : Ողջոյն ձեզ, ո՛վ քաջ մարտիկներ, դո՛ւք, որ մահը արհամարհելով նետուեցաք գէպի կռուի դաշտ, մոռնալով ձեր սիրելիները գրկեցիք պաշտելի եռագոյնը : Հայրենիքի սիրոյն ձեր թանկագին կեանքը դահեցիք, և ահա այսօր Հայ ազգը կուգայ պսակել ձեր վեհապանծ ճակատը դափնիներով : Այո՛, մենք գիտենք թէ, ձեր մէջը կը վառի այն դիւցազնական ոգին, որ դիտէ փշրել, ջախջախել իր թշնամին, մենք գիտենք թէ ձեր բազուկները պողպատէ են և յոգնիլ չեն դիտեր, ձեր սիրտը դիւրագգած՝ որ գիտէ զգալ ու տուկալ, ձեր սրունքները երկաթէ՝ որոնք գիտեն ճգմել : Զա՛րկ ուրեմն, զա՛րկ թշնամիիդ, որ օձերու պէս կը սողայ՝ անյադաբար ծծելու ցեղիդ ամենը արիւնը, զա՛րկ ու փշրէ անոր գլուխը : Զա՛րկ, օտարներէն չկա՛յ յոյս, զա՛րկ, բայց պահէ քու վեհանձնութիւնդ :

Ողջոյն ձեզ, ո՛վ քաջորդիներ, լսեցէ՛ք ձեր խրամներուն մէջէն մեր մանուկ սրտի ձայնը, որ միշտ կ'աղօթէ ձեզի համար, և

գիտցէք միանգամայն միշտ թէ
ձեր ետեւէն ունիք սերունդ մը,
որ կը դաստիարակուի ձեր յա-
ջորդներն ըլլալու համար: Դո՛ւք,
ո՛վ քաջեր, ձեր հետը ունեցէք
մեր զգացումները և մեր անմեղ
սիրտերը: Մենք՝ որ այժմ չենք
կրնար կռուի դաշտ վազել և
կռուիլ ձեր կողքին, բայց ձեր
հետը ունիք միշտ մեր սիրտն ու
հոգին:

Ձեր օրը՝ բանակի նուիրական
օրը՝ յարգանքով ողջունեցինք
մենք եւս Ռ. Գօլէճի մէջ՝ հայ
ուսանողներուն լայն շրջանակին
մէջ, և այն առթիւ պանծացու-
ցինք Հայկական Նւագոյնը, խո-
նարհելով անոր առջեւ. «Յար-
գանք քեզ»: Ո՛վ մարտիկներ,
եթէ քնարը անդո՛ր է պատմելու
ձեր փառքը, եթէ շքեղաշուք
դափնիները պակաս են զարդա-
րելու ձեր սուրբ ճակատը, մենք
միշտ ներկայ ենք մեր սիրտովը և
մեր մանկական համբոյրներով զար-
դարելու ձեր անբիծ ճակատները:
Ողջո՛յն ձեզ...:

ԳՐԻԳՈՐ ԳԱՐԱՊԱՃԵԱՆ

Պեպեֆ Ուսանող Ռ. Գօլէճի
նիպոս. Բ. դասարանի

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

Խեղճ և որդեկորոյս մայրեր,
մի՛ լաք: Ձեր սիրասուն զաւակ-
ները իրենց կեանքը թշուառ
ազգին նուիրեցին: Անոնք իրենց
երիտասարդ հասակը, ծնողքն ու
քոյրերը մոռցան և սուրբ դործին
համար իբրեւ նահատակ՝ ռազմի
դաշտին վրայ փռուեցան: Թէեւ

անոնց անթաղ դիակները հողե-
բուղի սուրբ աղօթքով չօրհնուե-
ցան, աչքերը մայրական դողդոջ
ձեռքերով չփակուեցան, արիւնով
ներկուած աշխարհի խաւար եր-
կինքը, տեսնելով բարձրերէն ա-
նոնց դիւցադնութիւնը, օրհնեց այդ
անմահ քաջերուն վերջին շունչը:

Դո՛ւք, ո՛վ հայ մայրեր, մի՛
լաք ձեր քաջադուներուն հա-
մար, անոնք արտասուք չէին սի-
րեր: Երբ չարչարուած հայրենիքը
ազատութիւն ցանկացող ազգէն
ողջակէզ խնդրեց, անոնք իրենց
վերջին համբոյրը տուին ձեզի
վառ և անլաց աչքով: Այո՛,
անոնք կարօտալից համբոյրով
արծիւի պէս սլացան դէպի արիւ-
նաներկ լեռները, իրենց հուժկու
ձեռքին մէջ կրելով սուրն ու
հրացանը և վարդապոյն շրթունք-
ներուն վրայ ազատութեան քաղցր
երգը: Մի՛ լաք, մայրեր, դուք
երջանիկ և անմահ էք ազգին
նուիրելով ձեր հերոս ու անմահ
քաջերը:

Ձեր այս փառքը անդուգական
պիտի մնայ:

ՅԱՐ. ՅՈՎԱԷՓԵԱՆ

Աշակերտ Ս. Մեսրոպ. վրժ.ի
Բարձր. Ա. դասարանի

ԵՆԹԱԴՐԵՆՔ ԹԷ

Ա.

Ենթադրենք թէ փոքրիկ աղջիկ,
Գլուխը կոտրեւ Բու պուպրիկին՝
Կրնայի՞ր զայն շինել կրկին՝
Եթէ լայիւր վիճով սասիկ:
Պիտի չըլլա՞ր շատ ալ պիտեան,
Որ առնէիր զայդ իբր կասակ,
Որ կոտրեցաւ պուպրիկը գան,
Եւ ոչ գրլուխդ. այս չէ՞ շիտակ:

Բ.

Ննքադրենք թե, փոքրիկ տղաս,
Գործ մը քեզի գար շատ դժուար,
Արդեօք պիտի ըլլամ յարմար,
Որ վրնասիս ու նստիս լաս:

Ա՛լ աւելի խոնեմ կերպ չե՞ր,
Քան սպասելն իբրեւ յիմար՝
Թափէիր բիւր անդուլ ջանքեր,
Սորվէիր այդ գործը դժուար:

(Անգլիներէնէ)

ԳՐ. Հ. Գ.

ՄՈՄԻ ՄԵ ՀԱՄԱՐ

Մով թ ստուերները անհետա-
ցած էին...: Սենեակիս լայնա-
բայ պատուհաններէն ներս կը սո-
ղոսկէին տեղոյն արեւին սառնո-
րակ և անաղդեցիկ ճաճանչները,
որ ըստ բաւականի լուսաւորած
էին սենեակը, և որ, հետզհետէ
տեսանելի կը դարձնէին պատե-
րուն վրայէն կախուած քարտէս-
ները, նկարները, որոնք կարծես
նոր կը վերակենդանանային...:
Աւելի աչքի կը դարնէր ընկերոջս
ժահիճը, որ իմինիս կցուած էր:
Նլլելու ժամը հնչեց: Ես թէեւ
քիչ մը անքուն մնացած էի և
վարանումը չըջապատած էր զիս,
բայց այլեւս չուզելով որոշեալ
պահը անցընել, ահամայ ելայ
անկողինէս և սկսայ հագուել: Ըն-
կերս ալ, վերմակին մէջ թաղ-
ուած՝ սուտ քուն եղած էր, և
ելլելը, պառկելը, երկու հակա-
ռակորդներ, կը մենամարտէին ի-
րարու հետ՝ տաք վերմակին ներ-
քեւ, իր մէջը...: Վերջապէս, ըն-
կերս ալ ելաւ և սկսաւ հագուել,

բայց նոյն միջոցին գետին ծռե-
ցաւ և սկսաւ բաներ մը փնտռել.
հասկցայ թէ փնտռածը մոմ մըն
էր, որ նախորդ դիշերուան թատ-
րերգութեան առթիւ, զուարճա-
նալու համար, շարուած էր պա-
տուհաններուն մէջ, և ինքը այդ
մոմերէն մէկը առած և բերած
դրած էր մանճակալին տակ և
հիմայ կը փնտռէր զայն, վրդո-
ված, ապշահար, կարծես թան-
կագին առօրեայ մը ըլլար, և
սակայն չկրցաւ գտնել. մոմը հոն
չէր, կորսուած էր: Իմ վրայ կաս-
կածեցաւ, որովհետեւ իրեն մօտ
կը պառկէի և յաստիօրէն երեսս
ի վեր սկսաւ կանչել.

— Մոմս տուր, դուն ես ա-
ռեր:

— Եղբա՛յր, ես ի՞նչ պիտի ը-
նեմ քու մոմը, ինծի պէտք չէ՛ և
զայն ունենալու ալ պէտքը չեմ
զգար. լա՛ւ նայեցէք, թերեւս
վերմակին ծալքերուն մէջը ըլլայ:

— Ո՛չ, ես երեխայ չեմ. խելքս
գլուխս է. լաւ նայած եմ, և
վստահօրէն կ'ըսեմ թէ դո՛ւն ա-
ռած ես մոմս:

— Է՛հ, աղէկ, ըսել է առանց
ուրիշին վրայ կասկածելու, զիս
գող կը բռնես, այնպէս չէ՞, և
մանաւանդ մէկ չնչին մոմի մը
համար. ամօ՛թ քեզ, ընկեր, հա-
ղար ամօթ:

— Լռէ՛, ինչո՞ւ ամչնամ, դո՛ւն
ամչցիր որ մէկ մոմի մը համար
կռիւ կը հանես հետս. չո՛ւտոյ
սո՛ւր իմ մոմս...:

Այսպէս քառորդ ժամ մը ի-
րարու հետ մաքառելէ վերջ,
համբերութիւնս հատաւ. ուստի

կարգ մը նախատական խօսքեր
ուղղելով, և արհամարհական
նայուածք մը սեւեռելով ընկե-
րոջս վրայ, բարկացած դուրս ե-
լայ: Հոգիս թախիծով լեցուած
էր և մեծ ցաւ մը զիս անհան-
գիստ կ'ընէր: Գրեթէ անօթի վա-
ճառատուն գացի, ընկերս ինձմէ
առաջ հասեր էր հոն, և իր գոր-
ծովը կը զբաղէր և նկատեցի որ
դէմքին վրայ զղջման արտայայ-
տութիւններ կ'երեւային: Առանց
բառ մը խօսելու անկիւն մը քաշ-
ուեցայ և սկսայ մտածել ուրիշ
բաներու վրայ, որպէսզի անձ-
կութիւնս փարատի: Բայց ո՛չ,
քիչ առաջուան միջադէպը միշտ
աչքիս առջեւն էր և անհնարին
էր զայն վտարել: Մտադրած էի
որ այլեւս յարաբերութիւնս խզեմ
ընկերոջս հետ և ալ երեսը չնա-
ջիմ, բայց, աւագ որ չկրցի ընել.
հինգ վայրկեան եւս սպասեցի,
տասը վայրկեան եւս, քսան վայր-
կեան եւս, բայց ալ չկրցի դիմա-
դրել և ըսի ընկերոջս.

— Պարո՛ն, ես մէկ մոմի մը
համար չեմ գտիր քեզի հետ,
երեք ժամ է որ իմ և քու հան-
գիստը վրդովեցիր և թէ իմ և
քու սիրտը վիրաւորեցիր պարապ
տեղը, փո՛ւճ տեղը. տուր նայիմ
սա ձեռքդ, և մի այդպէս երեսդ
կախեր: Առի ձեռքը և ուրախու-
թեամբ և խանդաղատանքով
սեղմեցի: Նոյն պահուն կը զգայի
թէ վերջ գտած էին հոգե-
կան վրդովումներս և դի-
մացինս ալ նոյնպէս կը տեսնէի:
Զարմանալի բան: Ոյսչափ սիրտ-
հատնում, այսչափ նեղութիւն
միայն մէկ մոմի մը համար. . . :

ՇԱՀՆԱԶԱՐ ՔԷՅԹԱՀԵԱՆ

Սերաստիոյ ազգ. որբանոցի
սաներէն

Կ Ո Յ Ր Վ Ա Ր Ա Չ Ը

Նորմատացի ճարտար նշանառու մը
իր 30 տարուան որսորդի կեանքէն հե-
տեւեալը պատմած է. — Առտու մը, ար-
շալոյսը չի ծագած, բառ սովորութեան
լեռ կ'երթայ, բայց հակառակ իր ջան-
քերուն, անկարելի կ'ըլլայ, բան մը որ-
սալ ու ճարահատ կ'երթայ ճամբու մը
եզերքը մացառներուն ետին դիրք ըրու-
նել: Բարեբաղդաբար իր սպասումը եր-
կար չի տեսեր. քիչ վերջ արդէն ճամ-
բուն մէջ քայլ առ քայլ իրարու ետեւէ
գացող երկու վարազներ կը տեսնէ. եւ
որովհետեւ մէկ փամփուշտը միայն
մ'նացեր էր, երկու վարազին մէկէն նշան
կ'առնէ, մէկ հարուածով երկուքը մէկ
որսալու համար: Ադդիւնքը սա կ'ըլլայ
որ առջեւէն գացող վարազը դիւահարի
պէս կը փախչի, իսկ միւսը տեղն ու
տեղը ոտքի վրայ կը մ'նայ անշարժ:
Այն ատեն որսորդը անոր կը մօտենայ
եւ կը տեսնէ որ վարազը իր- դունչովը
փախած ընկերոջը փրթած պոչը բռնած
էր: Այս վարազը կոյր էր... Ի՞նչ կ'ընէ
մեր Նորմատացին. փրթած պոչէն կը
բռնէ եւ իր տունը կ'առաջնորդէ նոյն
վարազը, որ միշտ իր նախկին առաջ-
նորդին հետեւիլ կը կարծէ...

Սկիւտար

Թրգմ. ՇԱ.ՔԷ.

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Բուժէլի Հիսարի Ազգ. վար-
ժարանին վեցամսեայ քննութեանց
մէջ յաջող հանդիսացած են Բար-
ձրագոյն Ա. և Միջին Ա. դասա-
րաններէն Լուիզ Մամիկոնեան,
Մերուժան Սարիմեան, Վահէ Ա-
լիքսանեան, Եղուարդ Գալֆայ-
եան և Գէորգ Կարադեան:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տիար Կարապետ Գուլումճեան
5 օրինակ «Առաւօտ» կը նուիրէ
Եօզկատի դպրոցին ու որբանոցին:

ԶԱՐՀՈՒՐԱՆՔԸ ԿԱՐՆՈՅ ՄԷՋ

Գրեց՝ Ժ02Է Բ. Լ.

Թարգմանեց Լ. ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ՄԱՐԴԱՐԵԱՆ
Վիեննական Մխիթարեան

— Ի՞նչպէս ձեռք պիտի բերեմ այդ խոստացուած գումարը, ո՞վ ինձի կ'ապահովցնէ թէ զձեզ վերստին պիտի գտնեմ... :

— Անցի՛ր մեզի հետ Ռուսիոյ սահմանը և հոն հնչուն դրամ պիտի դրուի ափիդ մէջ :

— Քիւրտ մըն եմ ես, և մըննոյն ժամանակ Գրգըլպաշ, մենք կառավարութեան հետ խաղ չենք կրնար խաղալ : Երեք եղբայրներս բանակին մէջ են, և եթէ ես կորսուիմ, անոնք պատասխանատու պիտի ըլլան ու մահուան պիտի դատապարտուին :

— Եթէ Գրգըլպաշ ես, այն ատեն կէս մը եղբայր ենք... 300 ոսկի կուտամ եթէ ծնողացդ հետ միասին ընկերանաս :

— Եկո՛ւր, Սըտքը չափուշ, կը պաղատէր Պարոյր, քեզի ի՞նչ թուրք պետերը... անոնք Ռուսերուն դէմ պատերազմի պիտի բռնուին և դուն պիտի մեռնիս այն մարդիկներուն համար, զորս դուն չես սիրեր... փախի՛ր մեզի հետ, Սըտքը չափուշ, փախի՛ր մեզի հետ... :

— Էյվալլահ... Ռուսերը ես կը սիրեմ... հարիւրապետ մը արդէն կը ճանչնամ... Կարնոյ վալին ինձի թոյլ տուած էր, որ անոր ընկերանամ, երբ նա մեր երկրին քարտէսը կը պատրաստէր :

— Երեք զոյգ եղ քեզի կը խոստանամ, Սըտքը չափուշ... երեք ուղտի բեռ ցորեն և երկու հարիւր ոսկի... :

— Ինչալլահ արշալոյսը չի ծագած պիտի գտնեմ զձեզ իմ երեք եղբարցս հետ Զաղա-Վարդիկ գիւղին քովը : Հրովհետեւ Օսման պէյ ամէնէն հարուստ և գիւղին ամէնէն վաղեմի անձն է և ազգականներէս մին, անոր մօտը պիտի կենանք՝ որչափ ատեն որ հարկը պահանջէ :

Յոգնութենէ, ցուրտէ և ձերբակալուելու զարհուրանքէն կիսամեռ, մեր երկու փախստականները յաջողեցան երթալ անձրելին և դիչերային խաւարին մէջէն :

Զանարեան էֆ. քիչ մը այդ կողմերը կը ճանչնար, ժամանակին այդ լեռները պտրտած ըլլալով, կոյս և չափուած ածուխի հսկայ հանքերը տեսնելու համար :

Ան իր տղան կ'առաջնորդէր, և առանց իր օգնութեան, ան անդունդներու մէջ պիտի կորսուէր : Հեղեղի ձորէն դուրս ելլել միայն կը մնար :

Արշալոյսը կը ծագէր, երբ տեսաւ փոքրիկ գիւղը, որ կարծես հեղեղին վրայ կախուած էր : Նոյն միջոցին լսեցին ճամբէն ձիաւոր խումբի մը գալը : Անմիջապէս պահուրտեցան ժայռի մը

ճատեւը, բայց թագաւորոյէն շուտով
եւան, երբ գաղտագողի նշմարե-
ցին և ճանչցան Սըտքը չափուշը,
որ իր երեք եղբայրներուն հետ
կուգար: Սըտքը չափուշ ըսաւ.

— Ահա եկանք, Զանարեան
էֆ., բանտարկեալներու խումբը
կը շարունակէ իր ճամբան և մեզ
ղրկեցին զձեզ փնտռելու: Աւել-
ցուր 100 սակի մըն ալ ու մենք
կը հրաժարինք ցմիշտ զձեզ հե-
տապնդելէ:

Է.

Անոնք գիւղ հասան: Գրգըլ-
պաշներու ամենէն երիտասարդը
իր ձին Զանարեան էֆէնտիին
տուած էր, ու ինք կը քալէր
Պարոյրին քովէն:

Գիւղին մէջ Օսման էֆէն-
տիին տունը ամենէն մեծն էր-
Տունը ամբողջ հողով ծածկուած
էր, և ուրիշ բացուածք մը չու-
նէր, բացի դուռնէն և երկու
փոքրիկ պատուհաններէն ու տա-
նիքին ճիշդ մէջտեղը ծակէ մը,
որ իբր ծխան կը ծառայէր: Տու-
նը գրեթէ միշտ կէս մթութեան
մէջ էր և ըստ բաւականի տաք,
հակառակ դուրսի պաղութեան:

Օսման էֆ. ճամբորդները լըր-
ջօրէն բարեւեց.

— Աս էֆէնտին հարուստ վա-
ճառական մըն է, զոր պաշտօն
ունինք առաջնորդելու մինչեւ
Կարին, կը բացատրէ Սըտքը չա-
փուշ, Զանարեան էֆէնտին ներ-
կայացնելով անոր՝ շատ բարձ-
րաստիճան աղղեցիկ անձ մըն է,
մինչեւ իսկ վալիին խորհրդականը:

Օսման էֆէնտի մեծ յարգան-
քով զիրենք ընդունեց: Օճախը
վառել տուաւ և իսկոյն թէյ և

դափէ հրամցուց և շատ լաւ տե-
սակէն ծխախոտ:

Ծառաները տախտակամածը
ծածկեցին հին սքանչելի գորգե-
րով և ճամբորդները հանեցին ի-
րենց կօշիկները ինչան յարգա-
նաց, ինչ որ տեղւոյն սովորու-
թիւնն էր, չաղտոտելու համար
գորգերը: Յետոյ երբ ճաշի ժամը
հասաւ, Օսման էֆ. հրամայեց որ
սեղանը պատրաստեն:

Ճամբորդները երբ ճաշը վեր-
ջացուցին, ծառաներն ու աղքատ
ազգականները նետուեցան սե-
ղանին մնացորդներուն վրայ:

Օսման էֆ. ճամբորդներուն
համար անկողիններ՝ պատրաստել
տուաւ սէլամլըքին մէկ անկիւնը:
Անկողին մը, պարզապէս փրո-
ուած գետնին վրայ, և երկու բա-
նուած վերմակներ: Քիչ յետոյ
հիւրերը անկողին մտան: Հակա-
ռակ իրենց ունեցած յոգնութեան,
անոնք շատ անհանգիստ գիշեր
մը անցուցին:

Ը.

Առտուն կանուխ անոնք բաժ-
նուեցան իրենց հիւրընկալէն, հե-
տերնին առնելով վարսակ, ձիե-
րուն համար, և քիչ մըն ալ պա-
շար, իրենց համար: Մտան լեռ-
ներուն մէջ: Ռուսական սահմա-
նազլուխ հասնելու համար 200
քիլօմէթր մնացած էր: Թրքական
պզտիկ գիւղերու մէջ, ուր մեր
ճամբորդները կանգ կ'առնէին
գիշերելու և պաշար առնելու
համար, մեծ երկիւղով կ'ընդուն-
ուէին զիւղացիներէն, շրջագա-
յութեան ելած պաշտօնեաներ
կարծուելով:

(Շար.)

SEVENTH ENGLISH LESSON

ADJECTIVES

Sweet	—սուիթ	==քաղցր	Deep	—ախի	==խորունկ
Idle	—այտու	==ծոյ	Wide	—ուայտ	==լայն
Bitter	—պիթըր	==դառն	Narrow	—նէթո	==նեղ
Content	—քընթէնթ	==գոհ	Warm	—ուօրմ	==տաք
Happy	—հէփի	==երջանիկ	Cold	—քօլմ	==սառ
Useful	—եուէֆուլ	==օգտակար	Dry	—տրայ	==չոր
Darke	—տարք	==մութ	Sour	—սաուր	==թթու
Ugly	—ըկլի	==ազեղ	Hungry	—հընկըրի	==անօթի
Glad	—ղէտ	==ուրախ	Heavy	—հէվի	==ծանր
Sad	—սէտ	==սխուր	Light	—լայթ	==թեթեւ

EXERCISE

The pupil is idle. My father is content, but my mother is sad. Is your teacher glad? Yes sir, he is very happy. The book is useful. This is dark and that is ugly. The desk is narrow, but the table is wide. It is very cold here it is very warm. The

inkstand is dry. Are you hungry? The black board is heavy but the pencil is light. Where is the map? There is the chalk. She has a pen and I have a pencil. We have a dog and they have a cat.

Two eyes and only one mouth have we.
The reason I think must be,
That we are not to talk about
Everything we see.

Two ears and only one mouth have we.
The reason is very clear,—
That we are not to talk about
Every thing we hear.



ԹԻԻ 9 ԲԱՌԵՂԾՈՒԱԾԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Վ ա չ ա ն
 Ա ր Ա ք ո
 Հ մ ա Յ ե ա կ
 Ա ա Ա ն ա
 Վ ա Ս ա կ
 Ա ն Տ ո ն
 Կ ե ո Ա ր ի ա
 Բ ա ն ա կ

ԼՈՒԾԵՑԻՆ

ՄԻՆԱՍԵԱՆ ՎՐԺ.ԷՆ (ԳՆՏԻԿ ՓԱՇԱ)

Նուարդ Փէշտիմալեան, Գոհարիկ Տիրատուրեան, Արաքսի Եազընեան, Զուարթ Տէյիրմէնեան, Վահան Ապա-
 ճեան, Սերովբէ Սերովբեան, Վահրամ
 Խանեան.

Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎՐԺ.ԷՆ (ԳՆՏԻԿ ՓԱՇԱ)

Սիրարփի Կիւմիւշկէրտան, Աղաւնի
 Նաւարեան, Ռօզէթ Յովնանեան, Գեղամ
 Սէթեան, Զօօն Նազարէթեան, Զարեհ
 Ժամկոչեան.

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎՐԺ.ԷՆ (ՄԿԻՒՏԵՐ)

Դարապետ Թօրոսեան, Հայկազուն
 Տօպաճեան.

ԹՈՐՈՍԵԱՆ ՎՐԺ.ԷՆ (ԳԱՏԸԳԻՒՂ, ՄԹՏԱ)

Վէրթայն Թօրամանեան, Վարդա-
 նոյշ Իւթիւնեան.

ՀԱՅ ԱԻԵՏ. ՎՐԺ.ԷՆ (ՊԻԼԷՃԻԿ)

Զապէլ, Զուարթ եւ Աստղիկ Արրա-
 համեան, Գրիգոր եւ Արշաւիր Աբրահամ-
 եան, Պետրոս Վարժապետեան.

ՀԱՅ ԱԻԵՏ. ՎՐԺ.ԷՆ (ԽԱՍ ԳԻՂ)

Անժէլ Զորիտոնեան.

ՄԱՅՐ ՎՐԺ.ԷՆ (ԳՈՒՄ ԳԱՐՈՒ)

Անահիտ Մէհտէրեան, Տիրուհի
 Մէյմարեան, Արուսեակ Զարիկեան, Ա-
 րուսեակ Քէշիշեան, Անժէլ Քէշիշեան,
 Սիրարփի Մինթանեան, Բեբրոնէ Պէ-
 սիմեան, Մաքրուհի Գրիգորեան, Եղի-
 տաբէթ Զաֆրանեան, Հերմինէ Պար-
 սամեան, Անժէլ Գրիգորեան, Վերգինէ
 Զարիկեան, Կարպիս Սինանեան, Եր-
 ուանդ Գրիգորեան, Կարապետ Գազազ-
 եան.

ԼԵՒՈՆԵԱՆ ՎԱՐԴՈՒՆԵԱՆ ՎՐԺ.ԷՆ

(ԹՕՓ ԳԱՐՈՒ)

Մելինէ Ալեանաքեան, Բնարիկ Աշ-
 ճեան, Բերկրուհի Շաքարեան, Հայկա-
 նոյշ Արիկեան, Պէաթրիս Ճանօեան.

ԱՄԵՐԻԿ. ՎՐԺ.ԷՆ (ԿԵՏԻԿ ՓԱՇԱ)

Խաչիկ Մանճապեան, Վաղարշակ
 Փափազեան, Բիւզանդ Գուլճեան, Եր-
 ուանդ Զարդարեան.

ՊԷՉԱՉԵԱՆ ՎՐԺ.ԷՆ (ՄԱԳՐԻ ԳԻՒՂ)

Ատրինէ Տատրբեան, Յովհաննէս
 Մինթանեան.

ԴԱԼՅԱՅԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԷՆ (ԽԱՍԳԻՒՂ)

Նուարդ Ռափայէլեան.

ՄԱԳՐԻ ԳԻՒՂԻ ԱՉԳ. ՈՐԲ.ԷՆ

Արեքնազ Ֆարսազեան.

ԴՊՐՈՅԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՈՐԲ.ԷՆ (ՇԻՇԼԻ)

Ատրինէ Փաշաեան.

Ս. ԺՕԶԷՅ ԳՕԼԷՃԷՆ (ԳԱՏԸ ԳԻՒՂ)

Ստեփան Մազմանեան.

ՌՕՊԷՐԹ ԳՕԼԷՃԷՆ

Գրիգոր Գաշասլանեան.

ԳԱՆՏԻԼԼԻԷՆ

Մելթոն Մելիքեան.

ԻԶՄԻՏԻ ՈՐԲԱՆՈՅԷՆ

Պերճուհի Յովհաննէս Ազնաւորեան,
 Սկիւտարցի Արմենուհի Միսիսեան, Նը-
 ւարդ Իշխանեան. Պերճուհի Սուրեան.

Լուծեցին նաեւ Ատրինէ Լորմակէօզ-
 եան, Զապէլ Կիւլիսթանեան, Երուանդ
 Բէրսեան, Նուպար Հօթոնեան, Ստեփան
 Սիսակեան, Գէորգ Տէր Ուկի եւ Միքա-
 յէ Լորմակէօզեան.

Թիւ 9 բառեղծուածը բուծողներէն
 վիճակով առաջնութիւն շահեցաւ Ա-
 նահիտ Մէհտէրեան, Գուր Գաբուի Մայր
 վարժարանէն, որուն փափաքին հաճա-
 ճայն վեցամսեայ «Առաւօտ» հանդէս կը
 նուիրենք Պէշիկթաշի որքանոցին.

Թիւ 7 եւ 8 Բառեղծուածները բու-
 ծած են նաեւ Պոլսէն Նուարդ Տէրադր-
 եան, Պէրպէրեան վարժարանէն Բիւ-
 զանդ Տաքէսեան.

ԾԱՆՕԹ.— Լուծողներուն նուէրները
 պիտի տրուին վիճակահանութեամբ.

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ

9999

Այս չորս (ինը) Թուանշան-
 ները ուղած ձեւովդ պիտի շա-
 րեա, գումարեա եւ արդիւնքը պի-
 տի գտնեա 100, Գաի'ր տեսնեմ.
 ՍԵՐՈՎԷՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳԱԻԱՌ**

Տարեկան (24 թիւ) 60 Դան.
Վեցամսեայ (12 ») 30 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (24 ») 10 Ֆրանկ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.—Առաւօսի հասցէն է՝ Պապը Ալի
ճատտէսի, թիւ 43, Բ. Դրան ճիշդ դիմացը:

ԾՆՈՂՔ ՄԻ ՔԱՇԵԼ ՏԱՐ

Ծնողքներ պէտք չէ քաշել տար
ներ փոքրիկներուն ակռաները, այդ կեր-
պով կզակի ձեւափոխութիւն յառաջ
կուգայ. Դիմեցէք Ատամնաբոյժ

ՏՈՒԹ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ

որ արտասահմանի մէջ երկար ժամա-
նակ, մասնաւորապէս զբաղած է նաեւ
տղոց կաթի ակռաներու դարմանումի
ուսումնասիրութեամբ եւ առով մասնա-
գիտութիւն ձեռք բերած:

Հասցէ՝ Պոլիս, Էմին Էօնիւ, Եէնի ճամբի
սանդուխներուն դէմ. թիւ 61.

ՀՈԳԱՆՈՅԱՆ

ՎԱՃԱՌ

ԵՐՈՒԱՆԻ

ԷՏԻԿԱՐԵԱՆ

Կը պատրաստե-
լու կը նորոգէ,
ասէն աւտակ
հովանոցներ:

Կը ծախէ նաեւ
ընտիր եւ գե-
ղեցիկ գուարներ:

Հասցէ՝ Եէնի ճամբի,
Զիլինկիրլէր, թիւ 64.



Ամեն Հայ պէտք է ունենայ ԱՄԲՈՂԶԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷՍԸ

Գուհաւոր, մեծադիր, մանրամասն
Գին 30 ՂՐՇ.

Դիմել Պապը Ալի ճատտէսի, Ատա-
տուրեան տպարան, 3. Դարբինեանի

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան
նախանձախնդիր անձերուն

ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ի դիւրութիւն իր յարգոյ յանախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, Նոր Նամակատան դէմ, Վլօրա
խան, թիւ 18, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբահաշակ ատամնաշարեր, գուրօններ,
պոլիչներ եւ բիւփօններ:

ԿԱՏԱՐԵԱԼ ԶՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ
ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն Պահնէ Դաբու: Մեյվախօժ Խան—Հեռաձայն Սթամպուլ 319

Ծովային գործակալութիւն, ներկայացուցչութիւն, ներածում, արտածում, բեռնա-
ւորում, մաքսային գործառնութիւն, յանձնակատարութիւն, պարպում եւ փոխադ-
րութիւն: Մաքսային գործառնութեանց ճիշդ ապրանքին Պոլիս ժամանումէն 48
ժամ վերջ մաքսի գործողութիւնները կը լրացնէ: Փոխադրութեան ճիշդ ամէն օր
ապրանք կ'ընդունի Սեւ Ծովի եւ Միջերկրականի օսմ. եւ օտար նաւահանգիստ-
ներուն համար: